

Հրանտ ՆԱԶԱՐՅԱՆ

*ՀՀ սահմանադրական դատարանի անդամ,
իրավաբանական գիյ. թեկնածու*

**ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ**

Սահմանադրական արդարադատությունը ՀՀ-ում որպես պետաիրավական գործառույթ, նոր երևույթ է, ունի ընդամենը տասնամյա փորձ: Չնայած դրան, որոշ վերապահումներով, այն գլխավորապես զարգացել է արդարադատական համաշխարհային և հատկապես՝ եվրոպական փորձի հետևողական ներդրման ճանապարհով, որի անմիջական արդյունքը 2005թ. դեկտեմբերի 5-ից ուժի մեջ մտած սահմանադրական փոփոխություններն են: Վերջիններս ուղղակիորեն ենթադրում են արդարադատության բնագավառի բազում հիմնախնդիրների իրավական լուծում՝ ինչպես նյութական, այնպես էլ՝ ընթացակարգային նորմերի կիրառման պրակտիկայում:

Իրավական լուծում պահանջող տեսական և գործնական խնդիրների շարքում հատուկ կարեւորություն է ներկայացնում հատկապես սահմանադրական արդարադատության արդյունավետության բարձրացումը, և որպես այդ նպատակին հասնելու միջոց՝ արդեն իսկ օրենսդրորեն նախատեսված երաշխիքների զարգացումը: Դրանց թվում, կարծում ենք, իր առանձնահատուկ տեղն ունի գործերի գրավոր քննության սկզբունքը և դրա կիրառման պրակտիկան, նամանավանդ, որ այն, որպես արագ և արդյունավետ արդարադատություն իրականացնելու դատավարական երաշխիք, համեմատաբար քիչ է ուսումնասիրված:

ՀՀ սահմանադրական արդարադատական պրակտիկայում գրավոր քննության սկզբունքը, ինչպես հայտնի է, ներդրվեց 1997 թվականից՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի լրացումների արդյունքում: Այդ օրենքի 21(1) հոդվածի համաձայն, պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերի, ինչպես նաև միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության (56 հոդված), սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու (62 հոդված) հարցերով, սահմանադրական դատարանի որոշմամբ, գործի քննությունը կարող է իրականացվել գրավոր ընթացակարգով: Այսինքն, գործի՝ այդպիսի ընթացակարգով քննությունը,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԼ • ՏԵՂԵԿԱԳԻՐ • 1(38)2006

օրենքով դիտարկված է ոչ պարտադիր, և՛ ոչ բոլոր գործերով: Հետևաբար, գրավորությունը որպես արդարադատություն իրականացնելու ընթացակարգային ձև, ըստ վերոհիշյալ օրենքի տրամաբանության, գնահատվում է որպես բացառություն, դատաքննության իրականացման բացառիկ միջոց:

Տեսական մոտեցման պարագայում, քննության գրավոր սկզբունքը մրցակցում է բանավորության հետ, որը որպես հիմնական սկզբունք նախատեսված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածում: Սակայն, 21 և 21(1) հոդվածների շարադրանքի որոշ երկիմաստության պարագայում էլ ակնհայտ է, որ ՄԴ-ում գործի քննությունը հավասարապես կարող է իրականացվել ինչպես բանավոր, այնպես էլ՝ գրավոր ընթացակարգով¹:

Արդյո՞ք գրավոր քննության սկզբունքի կիրառման կարգն ու շրջանակները բավարար են ՀՀ-ում սահմանադրական արդարադատության արդյունավետ իրականացման համար, հատկապես՝ սահմանադրական փոփոխությունների կիրառման ներկա փուլում, երբ տեղի է ունեցել ՀՀ սահմանադրական դատարանի գործառույթային շրջանակի, նաեւ՝ սահմանադրական դատարանի հիմնող սուբյեկտների ընդլայնում: Կարծում ենք, որ այդ սկզբունքի կիրառման պրակտիկան պարտադիր զարգացման և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու լուրջ հեռանկարներ ունի:

ՀՀ սահմանադրական դատարանը գրավոր ընթացակարգով առայժմ քննության է առել 136 գործ կամ՝ քննված բոլոր գործերի մոտ 22 տոկոսը, որոնք առավելապես միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության հարցով են, և փոքրաթիվ գործեր՝ կապված պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ²: ՀՀ սահմանադրական դատարանի գործող կանոնակարգով նախատեսված է գրավոր քննության միայն ընթացակարգը և առայժմ հստակեցված չեն այդպիսի քննության անցկացման մասին որոշման կայացման հիմքերը (մոտեցումները): Եվ աշխատակարգային միստերում գործը գրավոր ընթացակարգով քննության ընդունելիս, ՀՀ ՄԴ-ն, որպես կանոն, չի պատճառաբանում այդպիսի որոշման ընդունման շարժառիթները:

1997-2006թթ. քննված գործերի առանձնահատկությունների ուսումնասիրման արդյունքում կարելի է որոշակիորեն փաստել, որ ՀՀ սահմանադրական դատարանը յուրաքանչյուր դեպքում գործը գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ որոշում է կայացրել, եթե.

¹ Նկատի ունենք այն, որ ՀՀ ՄԴ-ի մասին օրենքի 21 հոդվածում բանավորության սկզբունքը, ըստ շարադրանքի, բացառությամբ գրավոր դեպքերի, իմպերատիվ բնույթ ունի: Այդպիսին է նաև օրենքի 21(1) երկրորդ մասի իմաստը, երբ առկա է բանավոր քննություն անցկացնելու վերաբերյալ կողմերի գրավոր դիմումը: Մինչդեռ, ինչպես նշվեց, 21(1) հոդվածի համաձայն ՄԴ-ն կարող է գրավոր ընթացակարգով գործ քննելու որոշում կայացնել: Սրանում է դրսևորվում վերոհիշյալ նորմատիվ դրույթների երկակիությունը:

² Վիճակագրական տվյալները բերված են 2006թ. փետրվարի 1-ի դրությամբ:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. քննվող միջազգային պայմանագրերը չեն պարունակել ՀՀ սահմանադրության նորմերին ուղղակիորեն հակասող, մեկնաբանման առումով վիճահարույց կամ՝ հատկապես բանավոր քննությամբ լրացուցիչ պարզաբանման ենթակա դրույթներ,

2. գործի քննությունը չի հարուցել ՍԳ-ի իրավական դիրքորոշման արտահայտման ուղղակի անհրաժեշտություն, կամ, երբ դատարանում քննվելիք գործն ունեցել է, այսպես կոչված, նախադեպային կամ ակնհայտ պոզիտիվ (դրական) բնույթ³,

3. քննվող միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունները չեն պարունակել մարդու իրավունքներին և ազատություններին ուղղակիորեն առնչվող նորմեր,

4. կողմերի ներկայացուցիչների անմիջական մասնակցությունը դատական միստին, հետեւաբար նաեւ՝ դատաքննության ընթացքում ՍԳ-անդամների և նրանց միջեւ դատավարական անմիջական կապը անհրաժեշտ չի եղել գործով վերջնական որոշում կայացնելու համար և այլն:

Այսպիսով, գրավոր քննությունը ՀՀ ՍԳ-ում, չնայած դրա վերաբերյալ որոշման կայացման իրավական չափորոշիչների բացակայության, իրականացվել է որոշակի մոտեցումների առկայության պայմաններում:

Ընդհանուր բնորոշմամբ, ՀՀ ՍԳ-ի մասին առայժմ գործող օրենքով և կանոնակարգով (50 հոդված) նախատեսված գրավոր քննությունն ոչ թե պարզ ընթացակարգ է, ինչը հատկանշական է ընդհանրապես դատաքննության այդ ձևին, այլ՝ առավել բարդ և աշխատատար: ՀՀ ՍԳ-ի պարագայում կարծես միատեղված են գրավոր և բանավոր ընթացակարգերի տարրերը: Ուստի, կարելի է որոշակիորեն հաստատագրել, որ այն իր հիմնական նպատակին չի ծառայել:

Սահմանադրական արդարադատական եվրոպական փորձը միանշանակ վկայում է, որ գրավոր ընթացակարգը գլխավորապես կիրառվում է սահմանադրական, այսպես կոչված, արստրակտ (վերացական) և կոնկրետ վերահսկողության դեպքերում, դիտարկվելով որպես «պրոցեսուալ (դատավարական) խնայողության» միջոց, հնարավորություն ընձեռելով դատարանին գործով որոշում կայացնել ժամանակի խնայողության և միաժամանակ իրավակարգավորման արդարադատական միջոցների ու ձևերի համեմատաբար սահմանափակ ռեսուրսների օգտագործման շնոր-

³ Նախադեպային բնույթի ներքո նկատի ունենք ոչ թե փաստաթղթային բացարձակ կրկնություն կամ նմանություն, այլ՝ դրանցում բովանդակված նորմերի միասեռություն, միաբովանդակություն: Այդպիսիք շատ հաճախ պարունակում են ՀՀ ՍԳ-ում քննվող միջազգային պայմանագրերը, և հաճախ, մինչև գործով որոշում կայացնելը փաստաթղթի ուսումնասիրությունից միանգամայն կանխատեսելի է դառնում, որ դրանում բովանդակված նորմերը սահմանադրականության խնդիր չունեն, ուստի որոշումն էլ ակնհայտորեն պոզիտիվ (դրական) բնույթ կարող է ունենալ:

հիվ, հատկապես, երբ հարցը վերաբերում է անհատական դիմումներին⁴: Մինչդեռ, ՀՀ ՄԳ պրակտիկայում, և այն էլ՝ անհատական դիմումների քննության իրավական հնարավորության դեռևս բացակայության պայմաններում, գրավոր քննությունը 1997-2006 թթ. ժամանակաշրջանում իրականացվել է գրեթե բանավոր ընթացակարգի սկզբունքներով՝ գործի հրապարակային քննության կազմակերպման, գործով դիմող կողմի ներկայացուցչին ՄԳ անդամների բանավոր, անմիջական հարցադրումների, այսինքն՝ բանավորության սկզբունքին բնորոշ դատավարական գրեթե միևնույն ժամկետային, ընթացակարգային ռեսուրսների օգտագործման պայմաններում: Իհարկե, այդպիսին է ՄԳ մասին գործող օրենքի և կանոնակարգի պահանջը:

Կարևոր է ընդգծել, որ գրավոր քննությունը, որպես «պրոցեսուալ (դատավարական) խնայողության» միջոց ոչ միայն արդարադատություն իրականացնելու դատավարական սկզբունք, եղանակ է, այլև լուրջ երաշխիք՝ ողջամիտ ժամկետում արդարացի դատաքննություն իրականացնելու համար, ինչն ուղղակիորեն բխում է Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածից և բազմաթիվ այլ միջազգային-իրավական փաստաթղթերում ամրագրված դրույթների իմաստից: Այն վաղուց ներդրված է ինչպես եվրոպական, այնպես էլ միջազգային այլ մասնավորապես՝ միջազգային դատարանների արդարադատական պրակտիկայում: Այնպես որ, սահմանադրական դատարանի, այսպես կոչված, նախադեպային, պոզիտիվ (դրական) և այլ բնույթի որոշումների գրավոր ընթացակարգով ընդունումն **առանց գործի դատական քննության հրապարակային կազմակերպման, ունի խնդրի ինչպես կազմակերպական**, այնպես էլ՝ իրավական լուրջ հիմնավորում, և մեր կարծիքով, անհրաժեշտ է այն հստակ նախատեսել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում և սահմանադրական դատարանի կանոնակարգում՝ ընթացակարգային այնպիսի առանձնահատկություններով, որոնք կիրառվում են միջազգային պրակտիկայում⁵:

Իհարկե, գրավոր քննության դեպքում խնդիրը ոչ թե սահմանադրական դատարանում գործերի քննության ընթացակարգային այլ սկզբունքների, մասնավորապես՝ հրապարակայնության, մրցակցության բացառումն է, այլ՝ արդարադատության արդյունավետության բարձրացման նպատակով նույնիսկ դրանց համատեղումը: Այսպես, ինչպես և բանավորի դեպքում, գրավոր ընթացակարգում, կողմերը (նրանց ներկայացուցիչները),

⁴ Չնայած, որոշ գնահատումներով, բանավոր ընթացակարգով գործի քննությունը կարող է իրականանալ առավել սեղմ ժամկետներում:

⁵ Մեր համոզմամբ, ՀՀ ՄԳ կանոնակարգով չպետք է նախատեսվեն գրավոր քննության կարգը սահմանող նորմատիվ բնույթի դրույթներ: Դրանք պետք է նախ և առաջ նախատեսվեն օրենքով:

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

չնայած գրավոր կերպով, կարող են ազատ արտահայտել իրենց դիրքորոշումները, ներկայացնել ապացույցներ, փաստաթղթեր (մրցակցության սկզբունքով), իսկ դատարանի գործով կայացրած որոշման հրապարակմամբ էլ կապահովվի նույնանուն սկզբունքի կիրառումը⁶: Այնպես որ, հրապարակայնության և մրցակցության հիմնական սկզբունքների պահպանումը գրավոր ընթացակարգում, ունի կարևոր նշանակություն, քանի որ այլ կերպ՝ կասկածելի կլինի արդարադատությունը:

Ինչ վերաբերում է գրավոր և բանավոր սկզբունքների վերը հիշատակված հնարավոր մրցակցությանը, ապա, մեր համոզմամբ, դրանք ոչ միայն կարող են իրար հաջորդել, այլև՝ համատեղվել, քանի որ հավասարապես գործադրվելու անհրաժեշտություն ունեն: Օրինակ, եթե, Խտալիայի, Գերմանիայի, Լիտվայի սահմանադրական դատարաններում, Էստոնիայում (սահմանադրականության գործերով), Ադրբեջանում և այլ երկրներում նախապատվությունը տրվում է գլխավորապես գործերի բանավոր քննությանը, իսկ Հունգարիայում, Պորտուգալիայում, Բելգիայում, Բուլղարիայում, Լատվիայում, որոշակիորեն նաև Թուրքիայում՝ գրավոր քննությանը, ապա մեր պարագայում կարծում ենք այդ սկզբունքների համատեղումն առավել արդյունավետ կարող է լինել: Այդպիսի համոզմունքը հիմնված է արդարադատական գործառույթի իրականացման բազմակողմանի այն հնարավորության վրա, որպիսին ընձեռում է դատաքննության բանավոր և գրավոր սկզբունքների անկաշկանդ կիրառումը, և հատկապես այնպիսի պայմաններում, երբ օրենքով որևէ կերպ չի սահմանափակվում այս կամ այն սկզբունքով քննվելիք գործերի շրջանակը, ինչը տեղի չունի ՀՀ ՄԳ պրակտիկայում: Նույնիսկ անհատական դիմումի քննությունը դատարանը կարող է իրականացնել բանավոր ընթացակարգով, եթե վիճարկվող իրավական ակտի սահմանադրականության խնդիրն ունի հասարակական առանձնակի կարևորություն, կամ դրա քննության արդյունքում դատարանը անխուսափելիորեն արտահայտելու է իրավական սկզբունքային դիրքորոշում:

Մեկ այլ կարեւոր հանգամանք ևս. հաշվի առնելով ՀՀ-ում դատական իշխանության նկատմամբ դեռևս առկա հասարակական որոշակի անվստահությունը, ՀՀ ՄԳ պրակտիկայում ներդրվող անհատական դիմումի (սահմանադրական զանգատի) ինստիտուտը, դեռևս վստահություն վայելելու կարիք կունենա: Հետևաբար, դատարանը սկզբնական փուլում թե՛րևս այդպիսի դիմումները մասամբ պետք է քննության առնի բանավոր ընթացակարգով՝ հրապարակայնության դատավարական ձևերի առավելագույն կիրառման պայմաններում: Եվ այստեղ դեռևս ամենևին էլ պարտա-

⁶ Այստեղ նկատի ունենք որոշման առաքումը իրավասու անձանց և հրատարակումը պաշտոնական մամուլում և տեղեկագրում:

դիր չէ հետևել Գերմանիայի փորձին⁷: Կամ, հարկ կլինի, օրինակ, բանավոր քննության շրջանակներում կիրառել գրավորության սկզբունքը, երբ անհրաժեշտ կլինի լրացուցիչ պարզաբանել կողմերի դիրքորոշումները, ուսումնասիրել գործով ներկայացված նոր նյութեր, փաստաթղթեր, կամ նշանակել փորձաքննություն և ուսումնասիրել փորձագետի եզրակացությունը, և ի վերջո՝ միջազգային փորձը և այլն: Արդյունքում, կտնտեսվեն դատավարական ժամկետները, միաժամանակ, որակապես կբարձրանա դատաքննության արդյունավետությունը, քանի որ դատավարական այդ գործողությունների կատարումն այսուհետ չի դիտարկվի, օրինակ, որպես ՄԳ գործով զեկուցող անդամի (անդամների) մենաշնորհ պարտականություն, այլ՝ հնարավորություն կտա դատարանին կոլեզիալ առանց լրացուցիչ հրապարակային քննության, ուսումնասիրելու ու գնահատելու գործով առկա բոլոր ապացույցները, կողմնորոշվելու և ավարտին հասցնելու տվյալ գործի քննությունը: Բացի այդ, ակնհայտ են նաև գրավոր քննության «առավելությունները» փաստաթղթային-գիտավերլուծական գործընթացի շրջանակներում, որով առանձնահատուկ է հատկապես սահմանադրական արդարադատությունը: Մենք համակարծիք ենք այն տեսակետին, որ սահմանադրական արդարադատությանը հատուկ չէ, այսպես կոչված, «դատական ակտիվիզմի» ինստիտուտը*:

ՀՀ ՄԳ պրակտիկայում կարելի է նաև կիրառել Բելգիայի Արբիտրաժային դատարանի փորձը, երբ գրավոր ընթացակարգով քննության դեպքում կիրառվում է բանավորության սկզբունքը: Օրինակ, հարկ եղած դեպքում, երբ անհրաժեշտ են կողմերի անմիջական դիրքորոշումները գործի քննության ընթացքում պարզված, կամ պարզաբանման ենթակա հանգամանքների շուրջ, կամ դատավարական բնույթի գործողություններ կատարելու, կողմերին զեկուցող դատավորի կամ դատարանի մյուս անդամների կողմից հարցադրումներ ներկայացնելու համար, գործի քննությունը կարող է շարունակվել բանավոր ընթացակարգով:

Այսպիսով, հարկ կլինի ոչ միայն ընդլայնել գրավորության սկզբունքի կիրառման շրջանակները, այլև՝ բովանդակությունը, դարձնելով այն առավել գործուն երաշխիք սահմանադրական արդարադատության արդյունավետությունը բարձրացնելու համար: Մեր համոզմամբ, դատարանն անկաշկանդ հնարավորություն պետք է ունենա իր որոշմամբ ընտրելու

⁷ Որպես կանոն, Գերմանիայի դաշնության սահմանադրական դատարանում անհատական դիմումները քննվում են գրավոր ընթացակարգով և քաղաքացին չի կարող այդպիսի գործերով դատարանից պահանջել բանավոր քննություն (տես, Law on the Federal Constitutional Court of Germany, article 93d (Federal Law Gazette 1 p.243): Սակայն, մեր համոզմամբ ոչ թե քաղաքացուն պետք է զրկել նման միջնորդության իրավունքից, այլ՝ դատարանին հնարավորություն ընձեռել անկաշկանդ կողմնորոշվել դատավարական ընթացակարգի ձևի ընտրության հարցում, ելնելով խնդրի կարևորության աստիճանից:

⁸ Այդ մասին մանրամասն տես, Эбзеев Б.С., Человек, народ, государство в конституционном строе Российской Федерации, М; 2005.

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

գործի քննության ընթացակարգը (բանավոր թե գրավոր): Միևնույն դեպքում, նման հարցով միջնորդություններ հարուցելու հնարավորություն պետք է ունենան կողմերը (կողմերի ներկայացուցիչները):

Այսպիսով, քննության ընթացակարգի վերաբերյալ որոշման համար հիմք կարող է հանդիսանալ ինչպես դատարանի, այնպես էլ՝ կողմերի դիրքորոշումը: Եվ յուրաքանչյուր դեպքում, մեր համոզմամբ, սահմանադրական դատարանը քննության գրավոր կամ բանավոր սկզբունքի կիրառման հարցում գերակայությունը պետք է տա արագ (ողջամիտ ժամկետներում), արդար և արդյունավետ արդարադատության իրականացմանը: Ահա այսպիսի շեշտադրմամբ, թերևս, իրավական կարգավորումը ցանկալի կլիներ:

Միաժամանակ, ակնհայտ է, որ ելնելով որոշ գործերի բնույթից, սահմանադրական դատարանը չի կարող առաջնորդվել բացառապես գրավոր սկզբունքով: Այդպիսիք են. ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 3-րդ (հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճեր), 3.1-րդ (Հանրապետության Նախագահի ընտրության արդյունքով ընդունված որոշման հետ կապված վեճեր), 4-րդ (Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտներն անհաղթահարելի կամ վերացած ճանաչելու վերաբերյալ), 5-րդ (Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության վերաբերյալ), 6-րդ (Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարիմության մասին), 8-րդ (համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու հիմքերի վերաբերյալ) և 9-րդ (կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ) կետերով նախատեսված գործերը: Չնայած, կարծում ենք, որ վերոթվարկյալ գործերով էլ բանավոր քննության ընթացքում կարող է կիրառվել նաև գրավորության սկզբունքը՝ վերը փաստված հանգամանքների շրջանակներում:

Ելնելով սահմանադրական-արդարադատական եվրոպական պրակտիկայից, ՀՀ ՄԳ-ում գրավոր սկզբունքով գործեր կարող են քննվել նաև եթե.

- ակնհայտ է (կասկած չի հարուցում), որ անձի սահմանադրական իրավունքը չի խախտվել,
- պատասխանող կողմը (ներկայացուցիչը) առարկություն չունի դիմում բարձրացված հարցի վերաբերյալ, այսինքն, ըստ էության բացակայում է իրավական վեճը, և միաժամանակ, ակնհայտ է վիճարկվող իրավական ակտի (ակտի նորմերի) հակասահմանադրական լինելը,
- վիճարկվող իրավական ակտով (ակտում պարունակվող նորմերով), կարգավորվում են նույնպիսի հասարակական հարաբերություններ, որպիսիք՝ ՄԳ նախկին որոշմամբ հակասահմանադրական ճանաչված իրավական ակտով (ակտի նորմերով):

Ուշագրավ է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի փորձը, երբ, գրավոր սկզբունքով այսպես կոչված, «նախադեպային» որոշում կայացնելիս, դատարանը հիմնվելով իր նախկին որոշման վրա, փաստորեն վերջինիս ուժը տարածում է (կամ վերահաստատում է նախկին իրավական դիրքորոշումը) նոր գործով սահմանադրաիրավական հարաբերություններ կարգավորելիս⁹: Իհարկե, նախադեպի ինստիտուտի կիրառման հիմնախնդիրը սահմանադրական-արդարադատական պրակտիկայում առավել ծավալուն է և ենթակա է ուսումնասիրման առանձին թեմայի շրջանակներում:

Գրավոր քննության սկզբունքի կիրառման արդյունավետության բարձրացման հարցը հաճախ է քննարկվել Եվրոպական սահմանադրական արդարադատական պրակտիկայի կատարելագործման խնդիրների շրջանակներում: Ուշագրավ են հատկապես «Ժողովրդավարություն օրենքի միջոցով» Եվրոպական խորհրդի հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) եզրակացությունները¹⁰:

Նախ, գրավոր քննակարգի զարգացման տեսանկյունից կարծում ենք սկզբունքային նշանակություն ունի հանձնաժողովի կողմնորոշիչ տեսակետն այն մասին, որ դատաքննության բանավոր սկզբունքի կիրառման տեսակարար կշռի ավելացումը կարող է անարդյունավետ լինել հատկապես բազմաքանակ գործերի դեպքում: Մի բան, որ տեղի է ունեցել ՀՀ ՄԳ նախորդ պրակտիկայում՝ կապված 2003թ. ՀՀ Նախագահի և պատգամավորների ընտրությունների հետ կապված վեճերով ՄԳ հասցեագրված աննախադեպ թվով դիմումների հետ¹¹:

Հարկ է նշել, որ 2006թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտնող ՀՀ Սահմանադրության փոփոխված 101 հոդվածի 6-րդ կետի ուժով, կարելի է սպասել ՀՀ ՄԳ գործերի քննության նկատելի աճ՝ ի հաշիվ անհատական դիմումների, իսկ ավելի ուշ՝ 2007-2008թթ. ընտրական գործընթացներով պայմանավորված, քաղաքական ուժերի հարաբերակցության հնարավոր փոփոխության արդյունքում նաև՝ դիմող այլ սուբյեկտների անխուսափելի ակտիվություն: Այսպիսի կանխատեսումները, մեր կարծիքով, անհետաձգելի են դարձնում ՀՀ ՄԳ օրենքում և կանոնակարգում իրավական այնպիսի միջոցների նախատեսումը, որոնք հնարավորություն կտան դատարանին մի դեպ-

⁹ Չնայած Ռուսաստանի Դաշնության ՄԳ պրակտիկայում գրավոր քննակարգը լեզուաբան (օրինականացման) խնդիր ունի, այնուամենայնիվ դատարանը սկսել է առավել ակտիվորեն կիրառել այն (այդ մասին տես, Митюков М.А., С.Н. Станских, Письменное разбирательство в конституционном судопроизводстве: Государство и право, 2005, N 10, с. 5-13),

¹⁰ Ուսումնասիրվել են Եվրոպական խորհրդի Վենետիկի հանձնաժողովի ինտերնետային պաշտոնական կայքում գետնղված նյութերը ([http://venice.coe.int/docs/2004/CDL-AD\(2004\)035-e.asp](http://venice.coe.int/docs/2004/CDL-AD(2004)035-e.asp)):

¹¹ Միայն 2003թ. հունիս-հուլիս ամիսներին, պահպանելով գործով որոշում կայացնելու սահմանադրական մեկամսյա ժամկետը, ՀՀ ՄԳ-ն քննեց շուրջ 16 այդպիսի գործ, չհաշված՝ մինչ այդ քննված ՀՀ Նախագահի ընտրության հետ կապված վեճերով 2 գործերը:

քում խուսափելու ակնհայտ անհիմն դիմումների քննությունից, մյուս դեպքում՝ գրավոր ընթացակարգով արդյունավետ կազմակերպել ընդունված գործերի մի մասի քննությունը¹²:

Ըստ Վենետիկի հանձնաժողովի դիտարկման, սահմանադրական արդարադատության որակի բարձրացման համատեքստում կարևոր է, որպիսի գործերի քննության ընթացակարգային ձևը որոշի ոչ թե դատարանի աշխատակազմը, այլ՝ դատարանը: Իհարկե, այստեղ նախ անհրաժեշտ է հստակ տարանջատել դիմումների գրանցման, նախնական քննարկման, ուսումնասիրման և դրանք քննության ընդունելու վերաբերյալ որոշման կայացման գործընթացները: Պարզ է, որ այն դիմումները (նամանավանդ՝ անհատական), որոնցում բարձրացված հարցերը ակնհայտ ընդդատյա չեն սահմանադրական դատարանին, կամ ներկայացվել են ոչ իրավասու սուբյեկտների կողմից և այլն, չպետք է դատաքննության առարկա լինեն, որոնց մասին այդ սուբյեկտները ՀՀ ՄԳ օրենքով և կանոնակարգով նախատեսված կարգով ու ժամկետներում աշխատակազմի միջոցով պետք է գրավոր տեղեկացվեն: Բոլոր դեպքերում, գործը քննության ընդունելու և ընթացակարգի ձևի վերաբերյալ որոշումները, ելնելով տվյալ գործի առանձնահատկություններից, պետք է կայացնի դատարանը: Այդ պրակտիկան ՀՀ ՄԳ-ն կիրառում է «Սահմանադրական դատարանի մասին» գործող օրենքի 29, 30, 31, 32 և 33 հոդվածներով նախատեսված կարգով:

Առավել խնդրահարույց է գրավոր ընթացակարգով քննության դեպքում հրապարակայնության կիրառման վերաբերյալ հանձնաժողովի հարցադրումը: Արդյո՞ք բավարար է գրավոր սկզբունքով դատարանի նիստ հրավիրելու և գործով որոշում կայացնելու մասին որոշումների հրապարակումը դիտարկել որպես հրապարակայնության սկզբունքի առավելագույն դրսևորման ձևեր: Բնականաբար, գրավոր սկզբունքի հիմնական արտահայտչաձևը՝ հրապարակային քննության և դրա հետ կապված ընթացակարգային մի շարք պարտադիր գործընթացների ու դատաքննությանը հասարակայնության և մասսայական լրատվամիջոցների ներկայացուցիչների բացակայությունն է: Թերևս, վերջինների պարագայում կարելի է գտնել սահմանափակ միջոցներ՝ ապահովելու համար որոշակի տեղեկատվություն դատաքննության ընթացքի վերաբերյալ: ՀՀ ՄԳ-ի դեպքում, այդ նպատակով կարող են նախատեսվել ՄԳ լի-

¹² ՀՀ ՄԳ-ում կարող է կիրառվել նաև, այսպես կոչված, «արագացված քննության» պրակտիկան՝ (բացառությամբ, իհարկե, ՀՀ Սահմանադրության 51 հոդվածի հինգերորդ մասում նախատեսված դեպքի) այն ինչ տեղի ունի, օրինակ, Պորտուգալիայում: Այդ երկրի Սահմանադրության 278 հոդվածի 8-րդ կետի հիմքով և Սահմանադրական դատարանի մասին օրենքի 60 հոդվածում նախատեսված կարգով կրճատվում են դատաքննության ընդհանուր ժամկետները, երբ Նախագահի հարցմամբ անհրաժեշտ է որոշել վերջինիս ստորագրմանը ներկայացված միջազգային պայմանագրի կամ իրավական ակտի սահմանադրականությունը: Բարեփոխված սահմանադրությունը ՀՀ ՄԳ-ին միանգամայն ընձեռում է իրավական այդպիսի հնարավորություն սահմանադրական կոնկրետ վերահսկողության դեպքում կիրառելու այդ պրակտիկան:

ազդրմամբ՝ ՄԳ անդամի, դատարանի աշխատակազմի իրավասու պաշտոնատար անձի (ծառայության) և մյուս կողմից՝ շահագրգիռ այլ անձանց, հասարակայնության, մասսայական լրատվամիջոցների ներկայացուցիչների միջև հանդիպումներ (մամլո ասուլիսներ)՝ գործի գրավոր քննության ընթացքի, դատավարական գործողությունների, ընդունվող որոշումների՝ ՄԳ կանոնակարգով սահմանված կարգով, պարզաբանման, մեկնաբանման խնդրով, բացառությամբ, իհարկե, պետական գաղտնիք պարունակող տեղեկատվության¹³: Հրապարակայնության այսպիսի ձևերի օգտագործումը կարող է կիրառելի լինել պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերի, սահմանադրական կոնկրետ վերահսկողության գործերի գրավոր քննության և այլ դեպքերում: Ահա, այսպիսի միջոցներով, փաստորեն, կարող են մասնակի «փոխհատուցվել» արդարադատության հրապարակայնության սկզբունքի այն սահմանափակումները, որոնք օբյեկտիվորեն գոյություն ունեն գրավոր ընթացակարգով քննության դեպքում:

Գրավոր քննության վերը դիտարկված հարցադրումներն, իհարկե, սպառնիչ չեն, կարիք ունեն միջազգային փորձի հիման վրա առավել բազմակողմ ուսումնասիրման և ՀՀ ՄԳ պրակտիկայում այդպիսի քննության ընթացակարգային ձևերի լիարժեք կիրառման: Դա, անտարակույս, կնպաստի սահմանադրական արդարադատության արդյունավետության բարձրացմանն ու դատական իշխանության հետագա ժողովրդավարացմանը:

¹³ Համանման պրակտիկա գոյություն ունի, օրինակ, ԱՄՆ Գերագույն և դաշնային այլ դատարաններում: